

Հայ տառերու գիւտին 1500-ամեակին և հայ տպագրութեան 400-ամեակին առթիւ մէկ հրկուօրէ ի վեր մեր գրածները գոհ ենք որ իրենց բարերար ազդեցութիւնը ունեցած են և արդէն ծանուցուած թաղերէն դատ Կ. Պօլսոյ միւս թաղերուն մէջ ևս տկաւած են պատրաստութիւններ տեսնուիլ, հանդիսաւոր և արժանավայել կերպով տօնելու համար այդ կրկնակ յօբելեանները Այսպէս՝ կը տեղեկանանք թէ Սկիւտարի երեք թաղերը միանալով պիտի կատարեն եղեր հանդէսը. Գէդիկ-Վաշայի մէջ ալ պատրաստութիւններ կը տեսնուին. Պերայի և Սկիւտարի մէջ թաղական խորհուրդներու սարքած հանդէսներէն տարբեր հանդէսներ ևս տեղի պիտի ունենան, մէկը էտայեան Սանուց Միութեան և միւսը Պէրպէրեան վարժարանի սաներուն կողմէ:

Իսկ ազգ. կեդր. վարչութեան խառն ժողովը իր կարգին երէկ (25 սեպտ.) ուղարկութեան առնելով այս խնդիրը՝ զբաղեցաւ անով և թէև վարչակ. նախորդ տնօրէնութեան մը համաձայն յանձնարարուած էր մայրաքաղաքիս բոլոր եկեղեցիներու հոգևոր պաշտօնեաներուն և թաղական խորհուրդներուն յառաջիկայ հոկտեմբեր 13-ի կիրակի օրը յօբելեանական հանդէս կատարել բոլոր եկեղեցիներուն մէջ, սակայն այսքանը բաւական չհամարեց և, ինչպէս թելադրած էինք, որոշեց պաշտօնապէս ևս տօնել այդ յօբելեանները Մայր եկեղեցւոյ մէջ սարքուած համազգային հանդէսով մը: Հանդիսակատարութիւնը տեղի պիտի ունենայ փոխանակ



և արկութիւնն ներկայացու  
 առաջնորդարա  
 լեանը, յայտնեն  
 և շարաթ օրը  
 են, որ քաղա  
 կայացած նիս  
 ւէրը՝ մասնակ  
 ամեայ և տպ  
 ւերին, որոշել է.

հոկտեմբերի 13-ի կիրակի օրուան, հոկ  
 տեմբեր 12-ի շարաթ օրը Մայր եկեղեցւոյ  
 մէջ, ուր այս առթիւ յատկապէս պիտի հրա  
 շարուին ներկայ գտնուելու ազգ. երեսփո  
 խաններ, վարչութեան անդամներ, տեսուչ և  
 թաղական խորհուրդներու, ինչպէս նաև խը  
 նամակալութեանց, հոգարարձութեանց ներ  
 կայացուցիչներ, վերջապէս ազգ. բոլոր  
 պաշտօնական մարմինները, յարանուա  
 նութեանց պատուիրակները և մամուլը:  
 Այս առթիւ աւելորդ չըլլայ թերևս վար

չութեան յիշեցնելու, որ ունէ անպատե  
 հութիւն չկայ, ընդհակառակը երբ այդ հան  
 դէսներուն հրաւիրուին նաև կրթական մի  
 նիստրութիւնը և օտար մտաւորականներ:  
 Ասկէ վատ, որոշուեցաւ նոյն շարաթ օրը  
 գոց պահել ազգ. պաշտօնական բոլոր հաս  
 տատութիւնները, պատրիարքարանը և հայ  
 վարժարանները. նոյնպէս հրահանգ տալ  
 բոլոր առաջնորդութեանց հանդիսաւոր կեր  
 պով տօնել նոյն յօրելեանները:  
 (ԵԺամանակ)

Յարս  
 վում  
 լով ի  
 շինու  
 կամ  
 է հրո  
 Եւ  
 Անց  
 սակա  
 պասս  
 ւաքի  
 պատս